



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԴՊԻՐՆԵՐՈՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՕԾՄԱՆ 48ՐԴ- ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 6 Նոյեմբերին, Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի Էնսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ մէջ, եկեղեցւոյ օծման 48-րդ տարեդարձին առթիւ:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ, մատաղօրհնէք պիտի կատարէ եւ դպիրներու ձեռնադրութիւն պիտի կատարէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ:

Ս. Խորանին պիտի սպասարէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Ռազմիկ Քիւյ. Խաչատուրեան:

Պատարագէն ետք, հաւատացեալները հրաւիրուած են մատաղի օրհնութեան, որ տեղի պիտի ունենայ «Աւետիսեան» սրահին մէջ. մատաղը պատրաստուած է եկեղեցւոյ Տիկնանց Օծանդակ Մարմինին կողմէ:

EPISCOPAL DIVINE LITURGY AND ORDINATIONS ON THE 48TH ANNIVERSARY OF HOLY MARTYRS CHURCH IN ENCINO

On Sunday, November 6th, 2011, the 48th anniversary of Holy Martyrs Church in Encino will be celebrated with Episcopal Divine Liturgy, ordination of acolytes, and the blessing of *madagh*.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon.

During the service, the Prelate will ordain as acolytes the following individuals: Hagop Demirjian, Manuel Bayramian, Haig Ohanessian, Sarkis Najarian, Adiss Bablanian, Gary Markarian, Avedis Patatian, Nareg Khatchadourian, Vrej Bayramian, and Gary Berberian.

Following the service, the Prelate will be led in a procession to "Avedissian" Hall where he will conduct the blessing of *madagh*, prepared by the parish Ladies Auxiliary.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ ՊԻՏԻ
ԿԱՏԱՐԷ Յ.Յ.Դ. «ԱՐՇԱՎԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ» ԿՈՄԻՏԵՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ
ԿԵԴՐՈՆԻՆ**

Կիրակի, 6 Նոյեմբերին, կեսօրէ ետք ժամը 3-ին, Առաջնորդ Սրբազան Յայրը պաշտօնական բացումը պիտի կատարէ Յ.Յ.Դ. «Արշավիր Շիրակեան» Կոմիտեութեան նորակառոյց հայ կեդրոնին, որ կը գտնուի Chatsworth շրջանին մէջ:

**PRELATE TO PRESIDE OVER OPENING OF "ARSHAVIR
SHIRAGIAN" GOMIDEH NEW CENTER**

On the afternoon of Sunday, November 6th, the Prelate will preside over the official opening ceremony of the new "Arshavir Shiragian" Gomideh center located in Chatsworth.

**ԱՉԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ՏՈՔԹ.
ՊԵՏՐՈՍ ԳԱՐԱՃՐՈՃԵԱՆ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՅՑԵԼԵՑ**



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ Տոքթ. Պետրոս Գարաճըրճեան Չորեքշաբթի, 2 Նոյեմբերի յետմիջօրէին այցելեց Ազգ. Առաջնորդարան եւ հիւրընկալուեցաւ Թեմիս բարեխման Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Տոքթ. Պ. Գարաճըրճեանի

կ'ընկերանար եղբայրը՝ ճարտարապետ Գեորգ Գարաճըրճեան, որ նմանապէս մեծ վաստակ ունի մեր ազգային կեանքին ու յատկապէս Կաթողիկոսութեան ծառայական ասպարեզներուն մէջ: Հանդիպումին մասնակցեցաւ Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ Տիար Ծորճ Չորպաճեան:

Հանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու եւ տեղեկութիւններ փոխանակելու մեր Թեմին ու Կաթողիկոսութեան գործակցական դաշտերուն մասին: Մասնաւորաբար վեր առնուեցաւ մեր Թեմին շնորհուած Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովուապետական այցելութիւնը եւ անով

յատկանշուած հանգրուանը: Տոքթ. Պ. Գարաճըրճեան գոհունակութեամբ արտայայտուեցաւ իրագործումներուն մասին եւ յաջողութիւն մաղթեց Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ տարուող աշխատանքներուն:

Նկատի ունենալով, որ Տոքթ. Պ. Գարաճըրճեան առաջին անգամ ըլլալով կ'այցելէր Ազգ. Առաջնորդարան, Առաջնորդ Սրբազանը հակիրճ տեղեկութիւններ փոխանցեց Առաջնորդարանիս եկեղեցանուէր ու կրթական ծառայութեանց մասին, ապա նաեւ ծանօթացուց Առաջնորդարանիս աշխատանքի մարզերն ու բաժանմունքները:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը խորհրդանշական յուշանուէրներ յանձնեց յարգելի հիւրերուն:

CENTRAL EXECUTIVE CHAIR DR. BEDROS KARAJERJIAN VISITS THE PRELACY



On Wednesday, November 2nd, 2011, Catholicosate Central Executive Chair Dr. Bedros Karajerjian visited the Prelacy where he met with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Dr. Karajerjian was accompanied by his brother, architect Mr. Kevork Karajerjian, who is a long-time supporter of our community and specifically the Catholicosate of Cilicia.

Prelacy Executive Council Vice-Chair Mr. George Chorbajian participated in the meeting as well.

The discussion centered on the endeavors and collaborative efforts between the Catholicosate of Cilicia and the Prelacy, as well as the recent Pontifical Visit of His Holiness Catholicos Aram I to the Western United States. Dr. Karajerjian expressed satisfaction at the work being carried out at the Prelacy, and wished the Prelate and Prelacy success in future endeavors.

Given that it was Dr. Karajerjian's first visit to the Prelacy, the Prelate familiarized him with the various departments during a tour of the headquarters.

The Prelate presented mementos to both Dr. and Mr. Karajerjian at the conclusion of the visit.
